

Վ. ՀԱՐՈՒՅՈՒՆՅԱՆ — Հայերենից-պարսկերեն բառարան Թեհրան, 1972 թ.

واریان هر ویونیان — فرهنگ ارمنی به فارسی تهران ۱۹۷۲

Գրքեր շարունակ շփման մեջ գտնվելով, բնական է, որ հայերենը և պարսկերենը առնչակրցվել են և հանդես բերել շատ ընդհանրություններ, մանավանդ որ երկու լեզուներն էլ ծնունդ են առել մի մայր լեզվից: Անցյալում հայ բառարանագրության պարսկահայ բաժինը ստեղծել է պարսկերեն-հայերեն մի րանի բառարաններ, իսկ հայ-պարսկերեն բառարան, որի պահանջը շատ զգալի է եղել, մինչև վերջերս չենք ունեցել: Այդ բացը լրացնում է 1934 թ. լույս տեսած «Պարսկերեն-հայերեն գրպանի բառարանի» հեղինակ Վարդան Հարությունյանը, հրատարակելով իր նոր աշխատությունը՝ «Հայերեն-պարսկերեն բառարանը», որ պարունակում է 24000 բառահոգված և որով նոր էջ է բացվում հայ բառարանագրության մեջ:

Հեղինակը իր առաջարանի մեջ գրում է. «Պարսկերեն լեզուն, ամբողջ Իրանի տարածքում, բազմազգի և բազմալեզու ժողովուրդների մեջ ձևոր է բերել լայն ընդհանրացում, որը թերևս իր 2500-ամյա պատմական անցյալում իր նախնիները չի ունեցել... Պարսկերեն գիտենալը դարձել է անհրաժեշտություն. և յուրաքանչյուր իրանահայ պիտի աշխատի օգտվել պարսկերենի ընձեռած հնարավորություններից»: Այնուհետև նա խոսում է հայ-պարսկերեն բառարանագրության վիճակի մասին՝ մինչև XIX դարը, ըստ արժանվույն գնահատելով Գևորգ Գյուր Պալատցու «Բառարան պարսկերեն» և Բարեգին Բահանա Կիրակոսյանի «Բառարան պարսկերեն-հայերեն» աշխատությունները: Մասնավորապես նա նշում է, որ Պալատցին հիմնականում հենվել է պարսից դասական գրականության վրա և բառարանի բառահոգվածները հարստացրել է Ֆիրդուսուց, Հաֆիզից, Ռումիից, Օմար Խյամիից և պարսից մյուս դասական հեղինակներից քաղված սրինակներով, հայատառ արտահայտությամբ և հայերեն թարգմանությամբ: Սակայն, ինչպես ցույց է տալիս Վ. Հարությունյանը, դա մի ընդարձակ թարգմանական բառարան է՝ պատմական ու աշխարհագրական ծանոթություններով և ստուգարանությամբ:

Հագրական ծանոթություններով և ստուգարանությամբ:

Վ. Հարությունյանը հատուկ տիրապետելով հայերենին և պարսկերենին, կազմել է մի աշխատություն, որը բոլոր տեսակետներից յզտակար է պարսկերեն իմացողների, ինչպես և նոր սովորողների համար: Բառարանի պարսկերեն բաժնի հայատառ և ճիշտ արտասանությամբ գրությունը հեշտացնում է պարսկերեն գրությունը չիմացողի գործը:

Վ. Հարությունյանը հետևել է պարսկերեն հնչյունների ժամանակակից արտասանությանը, ինչպես և հատուկ ուշադրության է առել նոր և նորակազմ բառերը, արաբականները երկրորդական պլան մղելով: Բնական է, նշում է նա, որ «այսօրվա և 25—30 տարի առաջվա պարսկերենների միջև խոշոր տարբերություն կա թե՛ ոճական ձևերի և թե՛ մանավանդ բառերի գործածության հարցում»: Ուստի նա, միանգամայն իրավացի կերպով, բոլոր արաբերեն բառերի փոխարեն ընտրում և առաջ է քաշում պարսկերեն կամ պահլավական ծագում ունեցող բառերը: Այսպես, օրինակ, բառարանում նա

فخری-ի փոխարեն գործածում է گواهینامه, مخارج-ի փոխարեն՝ هزینه, ششما-ի փոխարեն՝ ششما, և այլն:

Քննարկվող բառարանի գլխաբառերը հիմնականում թարգմանված են պարսկերեն մեկ բառով կամ հոմանիշներով, առաջնությունը տալով պարսկերեն բառերին: Այսպես՝

Իրոյակ — դերաֆշ, փաբշամ, բէյրադ, ալամ:

Իրոյակակիր — փաբշամդար, ալամդար:

Բառարան — լօղաթ նամէ, ֆաբշամե, դամուս:

Սիրտ — գէլ, դալբ:

Եթե հայերեն գլխաբառը չի ունեցել համարժեք պարսկերեն բառ, այդ դեպքում հեղինակը դիմել է բացատրության մեթոդին, ինչպես՝ Հաջաբուլ — գիյահ ի բէ նան բէ դաբթ աշադ:

Աղջիկտես — ա՛վվա՛լին ա՛յադա՛թ է ոա՛սան է դամադ, բա՛րա յէ դիդա՛ն է դօխթա՛ր է մօու-րէդ է նա գա ր: Մի շարք գլխարառեր էլ ուղ-դակի սլատճենված են՝ Մովսէսն — դօղդ է դա՛րեայի. Մովսէսն — չա՛նգ է դա՛րեայի:

Հեղինակն իր օգտագործած աղբյուրներից բացի բառարան է մուծել նաև նոր բառեր՝ Տիեզերագնաց — ֆա՛ղանա՛վա՛րդ, տիեզերանավ — բա՛շի յէ ֆա՛գալի և այլն:

Ժամանակակից բառարանագրությունը մեծ կարևորություն է տալիս դարձվածաբանությանը: Այդ հանգամանքը բազմապատկերել է գրա-խոսվող բառարանի հեղինակը, բայց հնարավորություն չի ունեցել իր բառարանը հարստացնել ժամանակակից հայերենի դարձվածքներով և կապակցություններով: «Ցանկալի էր, — գրում է Վ. Հարությունյանը, — որ ներկա աշխատանքն էլ ճոխացված լինել օրինակներով, սակայն գործը բավական առաջացած էր, երբ այս միտքը հղացվեց»: Հեղինակը խոստանում է հրատարակելիք ընդարձակ բառարանների մեջ լրացնել այդ բացը:

Հայերեն-պարսկերեն այս բառարանը ունի նաև սովորույթ ուրու կողմեր: Այսպես, մի շարք հայերեն գլխաբառերի տարբեր նշանակությունները պարզ չեն տրված: Երկնղվյան թարգմանական բառարաններում համանուն բառերի բացատրության ժամանակ ավելի զգուշություն է

պահանջվում: Օրինակ, համ, հանաւ, մարտ, պարկ, շահ և այլ, համանուն ունեցող բառերի թարգմանության ժամանակ, գլխաբառից հետո փակագծով կամ բռն է համարժեքով պետք է ցույց տալ գլխաբառի նշանակությունը, այսպես երկրորդ լեզուն շտիրապետողը կարող է նա՛րա՛րդ, չա՛նգ, փե՛լաւ, մօբաւէզ, պարսից բառերը գործածել կովի փոխարեն՝ մարտ ամսի համար, կամ — սուղ, նա՛ֆո, մո՛նֆա՛րա՛ք, բա՛հրէ, ճօզուլ, լաճգիլ բառերը՝ շահի, օգուտի փոխարեն՝ շահ, արժաւ բառերի համար: Որոշ բառահոգւածներում չեն բացատրված հայերեն գլխաբառի տարբեր առումները (ինչպես՝ Լեւոն — միս դօթը): Բառարանում, դժբախտաբար, տեղ են զբաղել նաև նեղ բարբառային, նույնիսկ գոհիկ բառեր (ղաճջըղ ղուլղուր, Բըֆ-րեւ և այլն):

Մեր այս դիտողությունները չեն իջեցնում «Հայերեն-պարսկերեն բառարանի» արժեքը, այլ բարի ցանկություններ են՝ հեղինակի հետագա աշխատություններն ավելի անթերի տեսնելու ակնկալությամբ:

«Հայերեն-պարսկերեն բառարանը» շնորհակալ և բաջալերանքի արժանի աշխատանք է և հիմնարար՝ սպագայում հրատարակելիք նույնատիպ ավելի ընդարձակ ու անթերի գործերի համար:

Բանասիր. զիտ. ղուլտուր Գ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

«ՀԱՅ ՊԱՐՔԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ (1794—1967)»

(համահավաք ցանկ), կազմեց՝ Ա. Կիրակոսյան, խմբագրություն և առաջաբան՝ Հ. Կոստիկյանի և Հ. Սիլվանյանի, Երևան, 1970, 624 էջ, գինը՝ 4 ռ.:

Վերջերս միայն հնարավորություն ունեցաւ առանալու «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» աշխատությունը: Հակասակ հոն տարված որոշ աշխատանքին ու եղած թաղմաթիվ դիմումներով՝ մեր շատ մը հայտնի գրապահոցներուն, գործը կկրն, ցավ ի սրտս, գրոշմը ձախողած հրատարակության: Ակնբախ են անհշտություններ և նշանակալից վրիպումներ, որոնք խտորեն կիջեցնեն անոր արժեքը:

Հայտնի է, թե մեր մտղովորդի կյանքի պայմանները անցյալին մեջ ունեցած են իրենց հոռի անգրադարձումը մամուլի բնականոն զարգացման և համախմբվածության վրա և առողիակ զմարացուցած համագործին ամեն աշխատանք: Սակայն կազմողի ու խմբագրողներու մասնագիտություններուն գլխավորը պետք էր ըլլա՛յ՝ «գտովի անցյալի փորձերն ու չիլնալ նորանոր սխալներու մեջ: Գեթ տալ ճշգրիտ պատկերը հայ պարբերական մամուլի մատենագի-

տությունը այլևս կյած է սովորական գրացուցակ մը, թերթերու հասարակ թվագրում մը ըլլալու սահմաններն: Հոն կպահանջվի տեսակ մը մասնատրկական ճշգրտություն: Ատեն է, որ տրվի յուրաքանչյուր թերթի ալսպես կուված «կենսագրությունը»՝ երբ լույս տեսած ըլլալու, կրած փոփոխություններու, ժամանակավոր կամ վերջնական գաղաթի թվականները և այլն, տեսակ մը գիտական մերձեցում տրվի նկարագրումին մեջ այն պարբերականներու, որոնք գեթ կզրտնրվին անմիջական տրամադրության տակ, Հայաստանի և առհասարակ Սովետական Միության հարուստ գրապահոցներուն մեջ: Միյուրեն հայթալթված տեղեկություններու համար հարկ կըլլա օգտվիլ, հնարավորին չափ, առարկայական ու վավերական տվյալներէ: Այս բուրքին համար, սակայն, կկարծենք, թե «Հայ պարբերական մամուլի մատենագիտություն» պատրաստող մը հարկ է որ ունենա տարրական ծանո-